



**Աշկ ենի դացալ,
շափաղ առալ էս
ծյուրան,
Սեր ենի առալ, շափաղ
առալ էս ծյուրան,
Սաս-սասի սանի, սրեթ
դանանի կյուրունիվա
սես...
ԳՈՒՍԱՆ ԱՇՈՏ**

Սյունյաց Երկիր

ՀԱՐԱՐ, 30 ԱՊՐԻԼԻ 2016Թ.
№ 13 (389)

www.syuniacyerkir.am

Խմբագրական

Այսօր էլ նա Սյունյաց դան սպասված որդին է

Ավարդ, երկար ժամանակ է՝ մենք չենք հանդիպում, մրքեր փոխանակում, միմյանց զորացնում, լրացնում, ինչպես փարիներ առաջ էր...

Մոտ մեկ տարի նրա գործարանային աշխարհի բնակիչն էի, այդ աշխարհի մոտ 300 հոգուց բաղկացած երիտասարդական կազմակերպության ղեկավարը, նրա աջակիցն ու գործերի ակնատեսը: Նա մոտ էր մարդու իմ իղեակին, ինչի համար ես ստացվում էի մեր ոգետորված համագործակցությունն ու աշխատանքը:

Շինուհայրի ռեսիդենտ կոչիկների գործարանի հիմնադիր տնօրենն էր:

Սովորական գործարան չէր: Այդ ձեռնարկության գործունեությունն ավելի շատ նման էր արարումի, հույսի եւ վստահության շքերթի. Շինուհայրից, Գորիս քաղաքից ու մերձակա գյուղերից հարյուրավոր երիտասարդների աշխատանքով ապահովվածություն, բարձրագույն կրթությամբ եւ փորձառու շատ մասնագետների՝ քաղաքներից գյուղ վերադառնալու հոսք, արտադրական բարձր մշակույթ՝ միութենական համաբավոր գործարանների հանգույն, երիտասարդ ընտանիքների հանդեպ առանձնահատուկ հոգածություն. կարողացավ ուրախությամբ լցնել ավելի քան երկու հարյուր ընտանիք՝ ապահովելով նրանց հարմարավետ բնակարանով (Շինուհայրում ու Գորիսում):

Դեռ 40 տարեկան չկար էդիկ Հարությունյանը, երբ հասցրեց իշխանական հասակով ներկայանալ ոչ միայն Գորիսին, այլև հանրապետության արդյունաբերության համակարգում երեւալ, մասնավորապես քիմիական արդյունաբերության կազմակերպիչների անդաստանում:

Հետագայում նրա գործը շարունակեցին Գառնիկ Մինասյանը եւ Ռուբեն Ալեքսանյանը:

Մոսկովյան նոր ուսումնառությունից, հանրապետության նավթամթերքների ապահովման կոմիտեի փոխնախագահ աշխատելուց հետո եկան նոր ժամանակներ...

Անշուշտ, կազմակերպչական նրա վիթխարի եռանդը, փորձը, նախկին ԽՍՀՄ հանրապետություններում ունեցած կապերն անհրաժեշտություն էին անկախացած Հայաստանի համար: Եվ ողջամիտ կլիներ նրա ուժերն այստեղ օգտագործել, բայց... տեղափոխվեց Ռուսաստանի Պաշտություն:

Տարիների հեռվից, հիարկե, դժվար է դատել, թե ինչու մեր շաղկապ-շփոթված-ալեկոծված երթին, հերոսացումների եւ անկումների մեր օրերին մասնակցեց դրսից: Այնուամենայնիվ մեզ իրավունք ենք վերապահում մտածել՝ չէր կարող



Խոսք էդիկ Հարությունյանի մասին

Վառ անհատականություն է՝ բառին բնորոշ բոլոր հատկանիշներով ու նրբերանգներով. նպատակասլացությունը, խոհեմությունն ու լրջությունը, սկզբունքայնությունն ու արդարությունը, սերը աշխարհի, մարդու, մշակույթի հանդեպ այդ հատկանիշների ընտրյալ շարքից են:

Էդիկ Հարությունյանին ճանաչում եմ դեռ ուսանողական տարիներից, իսկ 1980-ական թվականների կեսերից ունեցել ենք առավել սերտ ու մտերիմ հարաբերություններ, շնորհիվ որոնց բացահայտել եմ նրա յուրահատուկ կերպարի բազմազան, հաճախ հակասական կողմերը: Ինձ մշտապես հաճելիորեն զարմացրել է նպատակ սահմանելու եւ դրան հասնելու նրա կարողությունը. այստեղ հարկ եմ համարում ընդգծել, որ նպատակասլաց լինելով հանդերձ՝ էդիկ Հարությունյանին բնորոշ չի եղել բարոյապես անթույլատրելի միջոցներով նպատակին հասնելու ոճը. մարդկային հարաբերություններում տեղ գտնող կարեւորագույն արժեքները պահպանելն ու դրանցով առաջնորդվելը նրա սկզբունքն է եղել: Լինելով չափազանց սրտամոտ եւ այլոց համար զոհողությունների պատրաստական՝ էդիկ Հարությունյանը միեւնույն ժամանակ խիստ որոշակի ու բարձր նշանող էր սահմանում իր հարազատական ու ընկերակցական տիրույթում ընդգրկվող անձանց համար: Մի կողմից

էջ 3

ՍԱՀՄԱՆՈՒԹՅԱՆ **Էդիկ Պասվականի Հարությունյան**
Ծնվել է 1943թ. հուլիսի 26-ին Գորիսի շրջանի Շինուհայր գյուղում:
Միջնակարգ կրթությունը ստացել է Գորիս քաղաքում:
1961-68թթ. սովորել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի մեխանիկամեքենաշինական ֆակուլտետում, ավարտելուց հետո աշխատանքի անցել Գորիսի «Միկրոէլեկտրաշարժիչ» գործարանում՝ ինժեներ-տեխնոլոգ:
1969-71թթ. աշխատել է Գորիսի N3 շարժական մեքենայացված շարասյունում՝ գլխավոր ինժեներ:
1971թ. ապրիլի 1-ին նշանակվել է Շինուհայրի ռեսիդենտ կոչիկների գործարանի կառուցման տնօրեն:
1976թ. հունվարի 30-ից Շինուհայրի ռեսիդենտ կոչիկների գործարանի տնօրենն էր՝ պաշտոնավարելով մինչև 1984թ. սեպտեմբերի 1-ը:
1984թ. ընդունվել է ԽՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր ժողովրդական տնտեսության ակադեմիա:
1986թ.՝ ակադեմիան ավարտելուց հետո, նշանակվել է Հայկական ԽՍՀ նավթամթերքների ապահովման պետական կոմիտեի (ավելի ուշ՝ «Հայնավթամթերք» արտադրատնտեսական միավորման) նախագահի տեղակալ՝ աշխատելով մինչև 1990թ.: Մի քանի անգամ ընտրվել է ժողովրդական պատգամավորների Գորիսի քաղխորհրդի եւ շրջխորհրդի պատգամավոր:
1974-90թթ. եղել է Խորհրդային Միության կոմկուսի շարքերում՝ քանիցս ընտրվելով կուսակցության Գորիսի շրջկոմի ղեկավար կազմում: Հետագայում որել է կուսակցության չի անդամակցել:
1990-ականներին բնակության է տեղափոխվել Մոսկվա:
Անուննացած է համաքաղաքացի Ռուբեն Ալեկիյանի հետ, ով դուստրն է Գորիսում ծանաչված Արամ Սելիկյանի, ունեն երեք որդի եւ յոթ թոռ:

թույլ տալ, որ այստեղ իր եռանդը չափավորեն, ինչ-որ կաղապարների մեջ դնեն իրեն, ինչ-որ կանոնի ենթարկեն. իր տեսակն էր այդպիսին. Խորհրդային էպոխայի օրերին անգամ կարողացել էր իր վարքից դուրս մղել ժամանակի ստանդարտները, ինչը, բնականաբար, իշխանական շրջանակներում միանշանակ չէր ընդունվում:

Բնակություն հաստատելով Մոսկվայում, էդիկ Հարությունյանն իրեն զրկված չհամարեց հայրենի երկրամասով զբաղվելու հնարավորություններից: Չէ՞ որ Սյունիքը, Գորիսը, Շինուհայրը նրա նախնիների բնակավայրը չէին սոսկ, այլ իր բնօրրանն էին, իր հուշերի ու կարոտների երկիրը, օտար ափերում իրեն

ապրեցնող աշխարհը: Եվ ի սկզբանե կամեցավ գոնե մասամբ ոգեկոչել իր երկրամասի սոցիալ-տնտեսական երբեմնի վիճակը՝ այս անգամ կանգնելով գյուղացու կողքին՝ փորձելով հնարավորինս մեղմել մարդկանց հոգսերը: Այդ ձգտումների լավագույն դրսևորումը եղավ Վերիշենի պանրագործարանը կաթի վերամշակման ժամանակակից ձեռնարկության վերածումը:

Անցած ավելի քան տասը տարվա աշխատանքները դիտարկելիս կարող ենք ստույգ արձանագրել՝ թեև Մոսկվայում է, բայց իր տիրական ներկայությամբ մասնակցում է հայրենական մեր ընթացքին: Ի դեմ էդիկ Հարությունյանի՝ ունենք հայի այն տեսակը, ով

ճակատագրի կամոք ապրում է արտերկրում, բայց հայացքով շրջված է դեպի Հայաստանի Հանրապետություն:

Թեև արդեն 73 տարեկան է, բայց ակտիվ է նախկին տարիների պես: Եվ որքանով տեղյակ ենք, ասպարեզից հեռացածների հոգեվիճակը նրան չի սպառնում: Այնպես որ նրանից նոր գործեր ենք սպասում:

...Ինչ լավ է, որ կան նման մարդիկ:

Ահա թե ինչու ոգետրությամբ ընդունեցինք առաջարկությունը՝ ընթերցողին ներկայացնելու մեր նշանավոր հայրենակցին՝ էդիկ Պասվականի Հարությունյանին, ով այսօր էլ Սյունյաց տան սպասված որդին է:

ՍԱՄՎԵՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ



Մոսկվա, Ռուսաստանի եւ Լոր
Նախիջեանի թեմի առաջնորդանիս
Սուրբ Պայծառակերտության
Սայր եկեղեցի



ՍՈՒՐԵՆ ԽԱՀԱՏՐՅԱՆ

Սյունիքի մարզպետ

Ուրախ եմ, որ առիթ է առաջացել խոսելու Էդիկ Հարությունյանի մասին, անդրադարձ կատարելու նրա անցած ճանապարհին, արժեւորելու եւ գնահատելու նրա վաստակը:

Դեռ երիտասարդ էր, երբ հայտնվեց Գորիսի շրջանի արդյունաբերության կազմակերպիչների առաջնագծում: Նրա ղեկավարությամբ կառուցվեց եւ հիմնադրվեց շրջանի արդյունաբերական խոշոր ձեռնարկություններից մեկը՝ Շինուհայրի ռետինե կոշիկների գործարանը: Եվ այդ ձեռնարկությունը՝ մոտ հազար աշխատատեղով, 1970-ականներին լուծեց սոցիալական լուրջ խնդիր գյուղապահպանության ոլորտում եւ հատկապես Շինուհայրում ու ենթաշրջանի գյուղերում: Նա կարողացավ ժամանակի առաջադեմ տեխնոլոգիաների կիրառման, ինժեներատեխնիկական արհեստավարժ կադրերի ներգրավման շնորհիվ ձեռնարկությունում ներդնել բարձրորակ ռետինի, ռետինե կոշիկների լայն տեսականու, կենցաղային բազում իրերի արտադրություն: Արդյունքում, առանց չափազանցության, Շինուհայրի կոշիկների գործարանը ճանաչում ձեռք բերեց նախկին խորհրդային երկրի քիմիական արդյունաբերության ամբողջ ոլորտում: Շինուհայրի արտադրանքը պահանջված դարձավ ԽՍՀՄ գրեթե բոլոր մարզերում:

Էդիկ Հարությունյանի նախաձեռնությամբ եւ գործարանի ֆինանսական միջոցներով վերականգնվեցին Շինուհայր բանավանի՝ գրեթե ավերված շենքերը, ինչի արդյունքում լուծվեց 182 ընտանիքի բնակարանային խնդիր: 42 ընտանիքի բնակարանային հարցն էլ լուծվեց Գորիս քաղաքում գործարանի կողմից կառուցված չորս բազմաբնակարան շենքի միջոցով:

Նախաձեռնեց մեծ ծրագիր՝ դեպի Շինուհայրի ներքին գյուղ (ինն Շինուհայր) եւ Որոտանի կիրճ ճանապարհ պատրաստելու, կիրճի բարեբեր հողերում օժանդակ տնտեսություն կառուցելու, 13 հա հողատարածքի վրա պտղատու այգի հիմնելու նպատակով, որը վերջնականապես կյանքի կոչվեց հաջորդ տնօրենի կողմից:

Բայց եթե այդ ամենն անցյալում է մնացել, ապա Վերիշենի հնամենի պանրագործարանին մոր կյանք տալը մերօրյա գործերից է, որի հեղինակը նույնպես ինքն է՝ Էդիկ Հարությունյանը:

Բնակվելով Մոսկվայում՝ նա երբեք չօտարվեց հայրենի երկրամասի հոգեկրից: 2003թ. ձեռք բերելով այդ գործարանը (ներկայումս՝ «Էլլա» ՓԲԸ)՝ կարողացավ այն վերածել ժամանակակից սարքավորումներով զինված ձեռնարկության. մոտ քսան աշխատատեղ, Գորիսի, Սիսիանի եւ Քաշաթաղի տարածաշրջանի 300 անասնապահի արտադրած կաթի ընդունում, մեկ տասնյակից ավելի բարձրորակ կաթնամթերքի արտադրություն տարեկան մթերվող 140 հազար լիտր կաթից:

Այդ ամենը ոչ միայն նկատելի ներդրում է հայրենի երկրամասում, ոչ միայն անասնապահությամբ զբաղվող հայրենակիցներին ձեռք մեկնելու կոնկրետ քայլ, այլև ընդօրինակման արժանի պահվածք արտերկրում բնակվող մեր հայրենակիցների համար:

Մի խոսքով՝ ապրելով արտերկրում, Էդիկ Հարությունյանի ուշադրության կենտրոնում, այնուամենայնիվ, մեր երկրամասն է, ինչի համար էլ իմ անկեղծ հարգանքն են ընծայում նրան, մարդուն քաջառողջություն եւ հաջողություն:



Տեղ Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյան

Ռուսաստանի եւ Լոր Նախիջեանի թեմի առաջնորդ

«Ինչպես որ մարմինն է մեռած առանց հոգու, այնպես էլ հավատն է մեռած առանց գործերի» (Հակոբոս Բ 26)

Հոգու գոհունակությամբ եւ գնահատանքով ենք անդրադառնում եկեղեցասեր, ազնվասիրտ ու բարեպաշտ, մեծ հայրենասեր Էդիկ Հարությունյանի անձին, ում կյանքի ապրած տարիները, հիրավի, ամփոփում են մեր հայրենիքի, Սուրբ Եկեղեցու ծաղկմանն ու բարգավաճմանը նպաստող աստվածահաճո գործերը:

Բարի գործերով վկայելով որդիական ջերմ սերն ու նախանձախնդրությունը՝ մինչ օրս Էդիկ Հարությունյանն իր անշահախնդիր ծառայությունն է բերում ինչպես վայել է ճշմարիտ քրիստոնյային, թե՛ «Հավատն առանց գործերի մեռած է»:

Պտուղը ծառից հեռու չի ընկնի՝ ասում են մեր իմաստուն հայրերը: Նախքան Էդիկ Հարությունյանին ճանաչելը, մենք ծանոթ ենք եղել նրա հրաշալի գավակների՝ Արեգի, Պատվականի, Կարենի հետ, ովքեր եկեղեցական համայնքի կառուցման տարիներին մշտապես մեր կողքին էին իրենց հոգեւոր, բարոյական, նաեւ՝ ֆինանսական

աջակցությամբ: Հարությունյան եղբայրները նվիրյալ այն հայորդիների թվում էին, ովքեր հավատացին ու գորավիզ եղան Մոսկվայում հայ համայնքի համար Աստծո տուն կառուցելու նախաձեռնությանը: Դա շատ կարեւոր էր, որովհետեւ առկա դժվարությունները հնարավոր էր հաղթահարել միայն մեկ կամք, բռունցք կազմած, մեկ ուժ դառած: Հուրախություն ամենքի՝ այսօր արդեն կանգուն է հայոց հոգեւոր տունը, որտեղ սիրով հավաքվում են բոլորը՝ եկեղեցու տաք ու ապահով թեւերի ներքո:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը, բարձր գնահատելով Հարությունյան ընտանիքի եկեղեցամկեր գործունեությունը, Էդիկ Հարությունյանին պարգևատրեց «Սուրբ Ներսես Շնորհալի» բարձագույն պատվո շքանշանով:

Ի խորոց սրտի աղոթքով Բարձրյալն Աստծո շնորհներն ու օգնակությունն ենք հայցում եւ մաղթում, որ Ամենախնամ Տեղը պարգևի Հարությունյան ընտանիքի անդամներին արեւշատություն, իսկ առաքինի ձեռնարկումները պսակի հաջողություններով:



Խոսք Էդիկ Չարությունյանի մասին



ԱՐԱՍ ՄԻՍՈՒՅԱՆ

ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր


Էջ 1

ընկերական հարաբերություններում մեծապես կարևորելով անշահախնդրությունը, մյուս կողմից հաճախակի բախվելով շահահեն հարաբերությունների իրականությանը՝ ցավոք նա երբեմն հոռետեսությամբ կամ վարանտությամբ էր լցվում մաքուր ընկերության գաղափարի կամ հնարավորության հանդեպ: Բայց, առհասարակ, ընկերության երեւոյթը եւ ընկերությանը նվիրումը մեծ տեղ ունեին նրա մտածողության ու զգացմունքային դաշտի մեջ:

Էդիկ Չարությունյան անհատականությանը բնորոշ են բնավորության տարամիտվող գծերը. ի պատիվ նրա, այդ բեւեռացումը հիմնականում դրական ուղղություններ ու բովանդակություն ունի: Իր շրջապատում նա վայելում է սառն ու սթափ դատող, աննշմար մանրուքներն անզամ տեսնելու, միաժամանակ կարելորդ անկարելորդից զատելու հմտություն ունեցող մարդու համբավ. մյուս կողմից կարող է դրսեւորել ամենառոտմանտիկ, զգացմունքային անհատին բնորոշ վարքագիծ: Բանականությունն ու զգացմունքայնությունը ցայտուն են արտահայտվում Էդիկի կենսակերպում, նրա մեջ բնակվում են կամային բարձր հատկանիշների տեր, արհեստավարժ մենեջերն ու օժտված, նրբագաց արվեստագետը, եւ հատկանշական է, որ այդ համակցությունը ներդաշնակ է, մի տեսակ ճաշակով է կերտված նրա կերպարում: Այն իր արտահայտությունն է գտնում նաեւ նրա առօրյայում, կենցաղում. միայն մոտ կանգնած մարդիկ կարող են Էդիկ Չարությունյանի արտաքինապես խրոխտ, ամուր ու համարձակ կեցվածքի տակ տեսնել նրա փխրուն ու հեշտ վիրավորվող սիրտը: Մշակույթը եւ, մասնավորապես երաժշտությունը նրա տարերքն են: Օժտված լինելով երաժշտական արտակարգ լսողությամբ ու մեղեդին զգալու, նրա շարժումը մեկնաբանելու նախանձելի կարողությամբ՝ նա ունակ է ոչ միայն արտաբերել ցանկացած եղանակ, այլեւ գրուցակցին հաճելիորեն փոխանցել երաժշտական ստեղծագործության իմաստն ու ոգին:

Իր բոլոր արտահայտություններում ու գործողություններում լինելով մաքսիմալիստ, բառի ամենադրական իմաստով՝ Էդիկ Չարությունյանը հասել է նշանակալի հաջողությունների: Իր բնատուր խելքով ու կամային բարձր հատկանիշներով կարող էր հասնել էլ ավելիին, եթե նրա վերելքի տարիները չհամընկնեին 1990-ականների պարտադրած դժնդակ պայմաններին: Այդուհանդերձ, հենց իր գնահատելի ելույթումն ու թրժված կերպարը թույլ չտվեցին, որ կյանքի հարուցած դժվարությունները նրան հասցնեն ոչ շահավետ համգրվանի: Էդիկ Չարությունյանը կարողացավ գտնել իր ոլորտը, շարունակել իր արգասավոր գործունեությունն ի բարօրություն իր ընտանիքի, հարազատների ու բարեկամների:

Էդիկ Չարությունյանին մաղթում են քաջառողջություն, երկար տարիների խաղաղ ու երջանիկ կյանք, որ միշտ շրջապատված լինի իր սիրելի ընտանիքով, թոռներով, իրեն գնահատող մարդկանցով: ■



**Այդքան գեղեցիկ եւ հնչեղ եր Կյորեսի լեզուն: Նա մի շքնաղ գորգ եր՝ նախշերով եւ վարդ ծաղիկներով մի հին գորգ, ինչդեռ Սինայի աղջիկ ժամանակ գործած գորգը, որ փոկած եր Նասու Ներեսու բեյի դահլիճում: Ինչքան հմանում եւ մաշվում եր, այնքան շքեղանում էին գորգի գույները, եւ դասահում եր, որ Սինան, երբ այդ հին գորգը սանում եր գեթե եւ վկանում եր, Սինան լաց եր լինում, եւ նրա հեթ լաց եր լինում Կյորեսի լեզուն...
ԱԿՍԵԼ ԲԱՎՈՒՆՅ**

Չանուն հող հայրենիի



ԱԼՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Ժամանակները եկել-գնացել են, հերթափոխել մեկմեկու: Ամեն ժամանակ

իր հեղեւում թողել է գործեր, կենսագրություններ, պարմություններ: Ու նաեւ Վերիշենի պանրագործարանի կենսագրությունը, որ սկսվել է անցյալ դարակազբին՝ Նախախորհրդային շրջանից: Պանրագործարանը քայլել է ժամանակի հետ, հասել մեր օրերը, դարձել հավաքարիմ գործընկեր ու վարահողան հավասարագիր սրացել սպառողների կողմից:

Վերիշենի պանրագործարանը նոր շնչառություն ստացավ 2003թ.՝ մեր համաքաղաքացի, մոսկվայաբնակ Էդիկ Չարությունյանի ու նրա որդիներ Արեգի ու Պատվականի կողմից: Այդ ժամանակ գործարանն արդեն վերջին շնչում էր: Էդիկ Չարությունյանը պատվախնդրորեն ձեռ-

նամուխ եղավ գործարանի, նրա համբավի վերականգնմանը՝ այն դարձնելով հույսի, լույսի օջախ տարածաշրջանի մարդկանց համար: Չէ՞ որ երբ գործարանն աշխատում է, եւ նրա զարկերակը խփում է համաչափ, նշանակում է կյանքը կանգ չի առել, ապագան տեսանելի եւ լուսավոր է: Իսկ դա անհրաժեշտ է պատերազմ տեսած ժողովրդի համար: Ու հետո՝ որդիներին կկապի հայրենի հողի հետ: Եվ նրանք հեռավոր Մոսկվայից կզգան հայրենի հողի շունչը, նրանք արմատները կենսունակ կլինեն, այն կդառնա լինելիության ակունք գերդաստանի համար՝ հոգեւոր առումով:

Սկզբնական շրջանում դժվար էր: Բայց Էդիկ Չարությունյանը չընկրկեց, անվախ հրամանատարի նման մետվեց մարտի՝ համուն հող հայրենիի: Մեկուկես միլիոն դոլար ներդրեց պանրի գործարանի շենքը հիմնովին արդիականացնելու համար: Չեք բերեց գերմանական արտադրության նորագույն սարքավորումներ: Արտադրությունն ամբողջովին ավտոմա-

Նայացիք՝ դեմի հայրենի երկրամաս

Հայացքով՝ դեմի հայրենի երկրամաս

Հանուն հող հայրենիի

Էջ 3

տացրեց: Բացի դրանից, տարածաշրջանի ֆերմերներին, հատկապես Քաշաթաղի շրջանի, անհատույց նվիրեց կովեր: Կաթի մեկ լիտրն այն ժամանակ արժեք 70 դրամ: Էդիկ Հարությունյանն այստեղ էլ ռիսկի գնաց՝ մեկ լիտրի գինը դարձնելով 120 դրամ:

Նախկին պանրագործարանից ոչինչ չի մնացել հիմա, ոչ մի հետք, մնացել է միայն 2-23-09 հեռախոսահամարը: Ու գալիս ես այն եզրահանգման, որ Էդիկ Հարությունյանի մոտ հայրենասիրությունը սահման չունի, հայրենի եզրերի հանդեպ ունեցած նվիրվածությունը չափ ու սահման չունի. միայն խենթ, Էդիկ Հարությունյան մարդ տեսակը կարող է գյուղում նման գործարան ստեղծել՝ բազ իմանալով, որ բռնած գործից եկամուտ չի ունենալու:



ԷԴԻԿ ՀԱՐՈՒՅՈՒՆՅԱՆ
«Էլուա» ՓԲԸ փնտրեն

Գործարանի տնօրենը

2010թ.-ից գործարանը ղեկավարում է Էդիկ Հարությունյանը: Ծնվել է 1976 թ. Գորիսում: Ավարտել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի Գորիսի մասնաճյուղը:

Ամուսնացած է, ունի երեք երեխա: Նրա նշանաբանն է՝ ապրել սեփական վաստակով: Մարդու մոտ գնահատում է անկեղծությունը, նվիրվածությունը: Խորշում է ստից, դավաճանությունից:

Պատրաստի գործարան պահելը հեշտ չէ, կորցնել է հեշտ: Մարդու ղեկավարելու հմտությունից է կախված գործարանի ճակատագիրը: Երկը եկավ՝ հաշվի առնելով ժամանակի ռիսկերը, չվարանեց ստանձնել քեռու ստեղծած գործարանի ղեկավարությունը: Իր առջեւ խնդիր դրեց պահել-պահպանել գործարանը, այնպես անել, որ գործարանի բարի համբավի վրա երբեք ստվեր չընկնի: Կարճ ժամանակամիջոցում Էրիկը դարձավ իր գործի գիտակը. գտավ ֆերմերների, աշխատողների հոգին տանող ճանապարհը, գտավ խոշոր պանրագործարանների մրցակցությանը դիմակայելու ճանապարհը. իսկ դա միայն ալյան մարգագետիններից սնված կովերի անարատ ու բարձրորակ կաթ մթերելն ու դրանից արտադրանք ստանալն է. այսինքն՝ հավատարիմ մնալ Էդիկ Հարությունյանի բռնած ճանապարհին: Եվ

որպես դրա տրամաբանական արդյունք, պանրագործարանի արտադրատեսակները շարունակում են առաքվել Ռուսաստան, Դուբայ...

Երկը խանդավառությամբ մեզ պատմում է գործարանի թողարկած արտադրանքի տեսականու մասին. 8 տեսակի պանիր, կաթնաշոռ, թթվասեր, թան, կարագ... Ֆերմերներից մթերված կաթը տեղում գնվում է, որոշվում յուղայնությունը: Ընդ որում՝ տեղում կաթի գնումը կատարվում է բուրգելով եւ այլ հիվանդություններն ի հայտ բերելու համար: Հիվանդ կովի կաթ հայտնաբերելուն պես այդ մասին հայտնվում է անասնատիրոջը եւ սանէպիդիոլոգիին: Մինչ արտադրանքի թողարկման անցնելը, ֆերմերներից մթերված կաթը գործարանում ենթարկվում է մաքրման, հետո՝ ջերմամշակման: Արտադրությունում այս երկու պրոցեսի դերը բավականին մեծ է: Դրանք այն հենքն են, որի շնորհիվ սպառողը գնում է իր առողջության համար անվտանգ կաթնամթերք: Իսկ կաթը մթերվում է Սյունիքի մարզի եւ Քաշաթաղի շրջանի 300 ֆերմերներից: Ընդ որում՝ պանրագործարանի ավտոմեքենաները ֆերմերների մոտ լինում են առավոտյան եւ երեկոյան ժամերին: Բացի դրանից, գործարանն ունի կաթի ընդունման յոթ կետ՝ սառնարանային տնտեսությամբ:

Եվ Էրիկ Հարությունյանն ամեն ինչ անում է, ամեն անհնարինը հնարավոր դարձնում, որ Էդիկ Հարությունյանը հեռավոր Մոսկվայում զգա, որ հենց այնպես չի վստահել Էրիկին, վստահել է՝ իմանալով, որ նա գործունյա մարդ է, գործարանի համբավը միշտ բարձր կպահի:

Նաեւ... երեխայի տակդիրներ

Էրիկի լուրջ դեմքը միանգամից լցվում է ժպիտով:

- Մեկ էլ տեսար մի ֆերմեր գանգեց՝ երեխայի տակդիրը վերջացել է, խնդրում են կաթի մթերնայով ուղարկել, մյուսն էլ թե՛ հեռախոսի վարձը խնդրում են մուծել, 3-րդն էլ՝ վարկիս տոկոսների ժամանակն է, չորրորդն էլ՝ երեխայի համար կոշիկ բերեք, եւ այսպես շարունակաբար: Դիմացող մարդ արարած է, նաեւ՝ հոգսերով: Էդիկ Հարությունյանը միշտ ասել է՝ անպայման ձեռք մեկնիր օգնություն խնդրողին, զորավիզ եղիր նրան: Ու մեկնում ենք: Եվ դրանից է նաեւ, որ ֆերմերները սիրով համագործակցում են մեզ հետ:

Նույն արշինով չափելը խորթ է նրանց

Ֆերմերների համար «Էլուա» ՓԲԸ հետ աշխատելը հեշտ է: Նրանք կաթի դիմաց վճարումների հարցում խնդիր չունեն: Ամիսը վերջացավ՝ ֆերմերը կատանա իրեն հասանելիք գումարը: Բացի դրանից, ֆերմերներին կաթի դիմաց վճարումները կատարելիս հաշվի է առնվում կաթի որակը, կաթի յուղայնության աստիճանը: Այդ իսկ պատճառով կաթի մեկ լիտրի գինն այստեղ տատանվում է 120-160 դրամի սահմաններում:

- Մենք կարագ քիչ ենք արտադրում, - ասում է Էրիկը, - եթե կարագ արտադրենք, ապա կարք պետք է շատ զտենք: Իսկ զտված կաթից որակյալ պանիր, կաթնաշոռ, թթվասեր ստանալն անհնարին է: Եվ հանուն արտադրանքի որակի՝ կարագ քիչ ենք արտադրում:

Իսկ պանրի տեսականին հասնում է 8-ի: Ուրեք էլ ժամանակակից տեխնոլոգիաներով պատրաստված պանիր է եւ ամենուր պահանջարկ ունի: Գնորդներն էլ արդեն անգիր գիտեն պանրի անունները՝ «Լոռի», «Չամախա» եւ այլն:

Հանուն քեռու երագանքի, այսինքն...

- Երբ եկա գործարան, աշխատատեղերի թիվը թողեցի նույնը, մարդկանց նորմալ, ժամանակին վարձատրում եմ: Աշխատողների համար ունենք հանգստի սենյակ, ճաշարան: Դա քեռու երագանքն



է՝ աշխատողին պահել մարդավայել, նորմալ պայմաններ ստեղծել նրա համար: Նրա երագանքն է նաեւ, որ իր հող հայրենիի յուրաքանչյուր մարդ արժանապատիվ վերաբերմունքի արժանանա, արժանապատիվ կյանք վայելի:

Տարվա ընթացքում «Էլուա» ՓԲ ընկերությունը մշակում է 140 հազար լիտր կաթ: 300 ֆերմերի հետ համագործակցող գործարանն իր ռիթմիկ աշխատանքով ոչ միայն չեն է պահում հայրենի ոստանը, այլեւ դարձել է սահմանին կանգնած զինվորի վահան: Սահմանի զինվորը երբ թիկունքին քերթություն է տեսնում, տաք շունչ, շոյող ձեռք եւ աշխատանքային առօրյա, ավելի է գոտեպնդվում: Ու հետո՝ «Էլուա» ՓԲԸ տված հարկերը նաեւ զինվորին են հասնում՝ տարբեր կերպ. հազուստի, սննդի եւ այլ դրսեւորմամբ, այդ գործարանում են աշխատում նրանց հարագատներից:

«Էլուա»: Այստեղ երկու սերունդ՝ ժամանակի հետ դաշն, հանուն հող հայրենիի բարիք են արտադրում: Ու ես հեռվից լսում եմ առաջին սերունդի՝ Էդիկ Հարությունյանի ձայնը՝ հողը ոտքերիս տակ անուր է, երբ

գործարանն աշխատում է: Եվ երջանիկ են, որ իմ անկախ հայրենիքի ստեղծման համար կարողացա մի պատ դնել, որպեսզի անողորմ քամիները չսասանեն նրա լինելիությունը: Եվ այդ պահին Էրիկն ասում է.

«Էլուան» զուտ գործարան չէ, այն հեռախոսն է, այն գորիսեցի վարպետ պանրագործների կենսագրությունն է եւ այդ կենսագրության շարունակողը, նրանց նվաճումը: Եվ ես պարտավոր եմ այդ կենսագրությունը լրացնել նոր էջերով՝ հանուն քեռու, այսինքն՝ հանուն հող հայրենիի:

Ժամանակի նետած մարտահրավերներին դիմագրավելու համար ժամանակակից լուծումներով է առաջնորդվում «Էլուան»: Նրա արտադրության յուրաքանչյուր քիչ կենսունակ է, այնքան կենսունակ, որ ժամանակի ընդերքից ժայթքող ոչ մի հրաբուխ չի սասանի այն նշանողը, որի բարձրությունն իրենք են սահմանել: Իսկ դա «Էլուայի» համբավն է:

Եվ երկու սերունդի ներկայացուցիչները մի նպատակ ունեն՝ հանուն հող հայրենիի ապահովել գործարանի հարատևությունը:



Շինուհայրի ռեպինե կոշիկների գործարանը



ԺՈՐԱ ՄԱՆՈՒՅԱՆ

1960-ական թվականներին անհրաժեշտություն էր առաջացել հանրապետության գյուղական վայրերում ստեղծելու արդյունաբերական ձեռնարկություններ կամ ձեռնարկությունների մասնաճյուղեր, արտադրամասեր:

Բանն այն է, որ գյուղատնտեսություն էին մուտք գործում մեքենասարքավորումներ, մեքենայացվում էին գյուղատնտեսական աշխատանքները: Եվ աստիճանաբար գյուղում պակասում էր ձեռքի աշխատանքի անհրաժեշտությունը, առաջանում էր աշխատուժի ավելցուկ:

Շինուհայրում այդ հարցն առավել հրատապ էր, քանի որ Տաթևիէկի շինարարությունից հետո, ինչպես եւ սպասվում էր, աշխատուժի ավելցուկն այնտեղ առավել մեծ էր: Այնպես որ՝ Շինուհայրում արդյունաբերական ձեռնարկություն կառուցելը ժամանակի հրամայականն էր:

Դեռես Տաթևիէկի շինարարության ընթացքում նախատեսված է եղել Շինուհայրում կառուցել երկաթբետոնե սարքավորումների գործարան, որպեսզի հետագայում ազատ մնացած աշխատուժն ընդգրկվի այդ ձեռնարկությունում: Շինարարության ընթացքում, սակայն, փոխվեց գործարանի ուղղվածությունը:

Ինչեւէ, գործարանի շենքի շինարարությունը սկսվեց 1964 թվականին, ավարտվեց 1975թ. դեկտեմբերի 1-ին: Շենքի կառուցումն իրականացրեց Տաթևիէկի շինվարչությունը: 1971թ. ապրիլի 1-ից գործարանի շինարարության պատվի-

րատու կազմակերպության տնօրեն նշանակվեց Էդիկ Զարությունյանը, ով ավելի ուշ՝ 1976թ. հունվարին, նշանակվեց ռեպինե կոշիկների գործարանի տնօրեն՝ այդ պաշտոնը վարելով մինչև 1984 թվականը: Պատվիրատու կազմակերպության գլխավոր ինժեներն էր Անատոլի Տոկոբովը (1972-76թթ.), գլխավոր մեխանիկը՝ Միքայել Զակոբյանը:

Գործարանի նախագծահաշվային փաստաթղթերը պատրաստվել էին Մոսկվայի ու Լենինգրադի համապատասխան ինստիտուտներում:

Գործարանի շենքն ունեցել է արտադրության կազմակերպման համար բոլոր պայմանները: Աղմինիստրացիայի աշխատողների համար կառուցվել էր քառահարկ տուֆակերտ շենք: Դրան կից էր արտադրական հզոր համալիրը:

Այդ ամենից գատ գործարանն ուներ նաեւ օժանդակ շինություններ՝ արհեստանոց, կաթսայատուն, հրշեջ ծառայության շենք, մաքրման կայան (վերջինս՝ գործարանից մոտ 700 մ հեռավորության վրա):

Գործարանի տարածքը՝ մաքրման կայանի հետ միասին, զբաղեցրել է 4,5 հա: Ավելի ուշ՝ գործարանը Որոտանի կիրճում ձեռք է բերել 13 հա հողատարածք՝ ձեռնարկության աշխատողների համար պտղատու այգի հիմնելու, հանգստյան տուն կառուցելու նպատակով:

Գործարանի սարքավորումների, հաստոցների տեղադրմանն ու մոնտաժմանը մասնակցել են Մոսկվայից, Լենինգրադից եւ Խորհրդային Միության այլ քաղաքներից հրավիրված մասնագետներ, բարձրակարգ ինժեներներ:

Գործարանի կարելությունն ընդգծելու համար հիշեցնենք, որ Շինուհայրի գործարանն իր նշանակությամբ եւ թողարկված արտադրանքի ծավալով ու տեսականիով Խորհրդային Միությունում չորրորդն էր՝ Լենինգրադի, Մոսկվայի եւ Կառուսի համանման ձեռնարկություններից հետո:

Գործարանն աշխատում էր ԽՍՀՄ նավթամշակման եւ նավթաքիմիական արդյունաբերության նախարարության կազմում ու կոչվում էր «Ռեպինե կոշիկների արտադրության Շինուհայրի գործարան»:

Արտադրության մեկնարկը տրվեց 1975-ի վերջին՝ սկզբնական փուլում

20 հազար զույգ կոշիկ արտադրելու առաջադրանքով: Զետագայում արդեն տարեկան առաջադրանքը հասնում էր 12,5 մլն զույգ կոշիկի արտադրության:

1976թ. նոյեմբերին գործարանին միացվեց Գորիսի ռեպինե կոշիկների գործարանը:

Ձեռնարկությունն աշխատում էր երկու հերթափոխով: 1976-ին աշխատում էր 850 մարդ (բացի շինուհայրցիներից, աշխատում էին նաեւ Գորիս քաղաքի, Խոտի, Զալիձորի, Տաթևի, Զարժիսի, Երևանի բնակիչներ), հետագայում աշխատողների թիվը մոտ հազար էր:

Գործարանի արտադրամասերն էին՝ նախապատրաստական աշխատանքների, կարի եւ ձեւի, մամլման, փաթեթավորման: Գործարանն ուներ լաբորատորիա, մեխանիկական արտադրամաս, ավտոհավաքակայան, պահեստներ, բուժկետ, հիգիենայի սենյակ, բաղնիք բոլոր արտադրամասերում, ճաշարան, խանութ, շինտեղամաս, ակումբ, գրադարան... Գործարանն ուներ նաեւ մատակարարման, առաքման, պլանավորման, կադրերի, աշխատանքի անվտանգության ապահովման, որակի վերահսկողության բաժիններ, հաշվապահություն, քաղպաշտպանության, իրավաբանական, պահակային եւ դիսպետչերական ծառայություններ:

Գործարանի ղեկավարը՝ Էդիկ Զարությունյանը, շարժուն, անհանգիստ բնավորությամբ անձնավորություն էր, աշխատանքների հմուտ կազմակերպիչ: Ոչ միայն գործարանի աշխատակիցների, այլեւ հասարակության կողմից սիրված անձնավորություն էր: Նրան հաջողվել էր երկրի ամբողջ տարածքում սերտ կապեր հաստատել եւ մատակարարող, եւ կոշիկ իրացնող կազմակերպությունների հետ:

Գործարանում մեծ էր արհմիութենական կազմակերպության դերը: Եվ դա՛ հատկապես աշխատողների հանգստի արդյունավետ կազմակերպման գործում: Զարյուրավոր աշխատողներ օգտվում էին հանգստյան տների անվճար ուղեգրերից, գործարանի հաշվին կազմակերպվում էր աշխատակիցների երեխաների ամառային հանգիստը: Արհկոնը երկար տարիներ (1978-93թթ.) ղեկավարում էր Վալերիկ Ասրյանը:

Գործարանում կար նաեւ կուսակցական կազմակերպություն, որը տարբեր ժամանակ գլխավորեցին Մելս Ծատրյանը, Գագիկ Բախչյանը, Կոյա Զարությունյանը, Արշակ Միքայելյանը եւ կրկին Մելս Ծատրյանը:

Գործարանի կոմերիտական կազմակերպությունը շրջանի ամենախոշոր երիտասարդական կազմակերպություններից էր, որը ղեկավարեցին՝ նախ՝ Վիկտորյա Պետրոսյանը, ապա՝ Սամվել Ալեքսանյանը, Ալբերտ Տոռոգյանը...



ԷԴԻԿ ԶԱՐՈՒՅՈՒՆՅԱՆ

Գործարանի տնօրեն՝ 1976-1984թթ.




ԳԱՌՆԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

Գործարանի տնօրեն՝ 1984-1990թթ.



ՌՈՒԲԵՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Գործարանի տնօրեն՝ 1990-2001թթ.



ՄԵԼՍ ԾԱՏՐՅԱՆ

Գործարանի կադրերի բաժնի պետ՝ 1975-2001թթ.

1984թ. սեպտեմբերի 1-ին հանրապետության ղեկավարության կողմից Էդիկ Զարությունյանը գործուղվեց Մոսկվա՝ սովորելու ԽՍՀՄ նախարարների խորհրդին կից ժողովրդական տնտեսության ակադեմիայում: Գործարանի նոր տնօրեն նշանակվեց Գառնիկ Արտավազի Մինասյանը (1984-90թթ.), իսկ 1990 թվականին մրցակցային ընտրությամբ տնօրեն դարձավ Ռուբեն Լազրի Ալեքսանյանը:

1996թ. ձեռնարկությունը սեփականաշնորհվեց, որից հետո հայտնվեց հոգեվարքի մեջ: 2001թ. հունվարի 1-ին արձակվեցին բոլոր աշխատողները, եւ վերջնականապես փակվեց Շինուհայրի ռեպինե կոշիկների գործարանը, որը, հիրավի, փառավոր ճանապարհ էր անցել եւ իր մնայուն տեղը գտել Զայաստանի Զանրապետության արդյունաբերության տարեգրության մեջ:

Մի կարելուր հանգամանք եւս՝ Զայաստանի այդ տարիների գրեթե բոլոր ղեկավարները՝ սկսած երջանակահիշատակ Կարեն Դեմիրճյանից, քանիցս եղել են գործարանում եւ հնարավոր ամեն ինչ արել արդյունաբերական այդ ձեռնարկության վերելքն ապահովելու համար: ■

ԿԱՌԵՆ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ. «Այսօր էլ մտք ճինուհայր եւ ցանկացած մարդու հարցրեք նրա մասին. միայն հիացական խոսքեր կլսեք»



ԱՆՏՈՒՆ ԵՐԿՐԱՆ

Մեր համատեղ աշխատանքը սկսեցինք 1972թ. հուլիսի 1-ից, երբ ինձ նշանակեցին Շինուհայր գյուղում ռեստորանի կոչվեղենի գործարանը կառուցող պատվիրատու դիրեկցիայի գլխավոր ինժեներ, իսկ տնօրենն էր Յուրի Յարոսլավսկին։ Բնավորությամբ լինելով կարգապահ, աշխատանքի ընթացքում ցուցաբերում էր մեծ պահանջկոտություն թե՛ իր եւ թե՛ ենթակառուցվածքի նկատմամբ։ Բոլորի հանդեպ բարեհամբույր էր, ապրում էր ամենօրյա հոգսերով եւ հնարավորինս ցուցաբերում օգնություն։ Նա ուներ յուրահատուկ մոտեցում համագործակցող կազմակերպությունների հետ. գործարար համագործակցության շնորհիվ ստեղծվում էր լայն ընկերական շրջապատ։ Արդյունքում Մոսկվայից ժամանած ընդունող հանձնաժողովը գործարանը շահագործման ընդունեց գերազանց գնահատականով։



ԳԱՌՆԻԿ ՄԻՆԱՅԱՆ

Եղիկ Յարոսլավսկից հետո Շինուհայրի ռեստորան կոչվեղենի գործարանի ղեկավարությունն ինձ վստահվեց։ Ես ավերակների վրա «թագավոր» չէի, ես «թագավոր» էի մի հսկա, զարգացած ձեռնարկության, որը մեծ համբավ ուներ հորհրդային Միությունում։

Եղիկ Յարոսլավսկին էնտուզիազմով լեցուն, գալիքը տեսնող, հեռատես մարդ է։ Կարողացել էր գործարանը դնել զարգացման ռեյտինգի վրա, գործարան, որի արտադրանքը սպառվում էր հորհրդային Միության բոլոր հանրապետություններում։ Իսկ ամենամեծ սպառողը Ռուսաստանն էր։ Գործարանի արտադրանքի մեծ պահանջարկը պայմանավորված էր նրանով, որ ռեստորան կոչվեղենը եւ որակյալ էին, եւ առողջության համար անվտանգ, որովհետեւ գործարանում ռեստորանը ենթարկվում էր ջերմամշակման։ Մարդիկ էլ

գործարանում աշխատում էին սրտացավորեն, տանտիրոջ հոգածությամբ։

Չեչտ չէր գյուղում գործարանի հիմնել, աշխատեցնել։ Եղիկ Յարոսլավսկին գիտեր, որ նոր տեխնոլոգիաների, արտադրության վերազինման հետ մեկտեղ կարելու է նաեւ մարդու հոգեբանության փոխումը։ Նա կարողացավ գյուղատնտեսական ավանդույթներով շինուհայրում հոգեբանության մեջ բեկում մտցնել, եւ շինուհայրից երեսով շրջվեց դեպի գործարանը։ Ու զարմանալ պետք չէ, որ հորհրդային Միությունում ամեն տարի կազմակերպվող ցուցահանդես-վաճառքների ժամանակ գործարանը կարողանում էր նորանոր պայմանագրեր կնքել՝ տարեցտարի ընդլայնելով արտադրանքի սպառման աշխարհագրությունը։

Երբ եկա գործարան, ինձ մնում էր շարունակել նրա սկսածը։ Եվ շարունակեցի՝ միշտ աչքի առաջ ունենալով նրա աշխատանքի հսկայական փորձը։



ՎԱՆԵՆ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ

Եղիկ Յարոսլավսկին հետ սկսել եմ աշխատել 1978թ. օգոստոսի 18-ից. Ռուբիկ Ալեքսանյանն էր ինձ ներկայացրել տնօրենին։ Այդ օրը նշանակվեցի երկրորդ հերթափոխի ղեկավարը։ Երկու ամիս անց՝ 1978թ. հոկտեմբերի 18-ին, ընտրվեցի գործարանի արհմիութենական կազմակերպության նախագահ՝ աշխատելով մինչեւ 1993թ.։

Այդ տարիներին գործարանում արժանագրվեցին մեծ հաջողություններ՝ արտադրության կազմակերպումից մինչեւ բանվոր-ծառայողների սոցիալական հարցերի լուծում։

Գործարանի տնօրենության եւ արհմիութենայի միջեւ եղել է սերտ համագործակցություն։ Արհմիութենական ցանկացած ոլջամիտ նախաձեռնություն արժանանում էր տնօրենի հավանությանը։

Եռամսյակը մեկ անգամ ամփոփում էինք մրցության արդյունքները, առաջավորները պարգևատրվում էին շքանշաններով, պատվոգրերով ու դրամական պարգևներով. դրանք գործարանի աշխատակիցներին ոգեւորությամբ հանձնում էր ինքը՝ Եղիկ Յարոսլավսկին։

Գործարանի ճաշարանում առողջության համար վնասակար արտադրանքներում աշխատող 250 բանվոր-ծառայողի տրվում էր անվճար սնունդ։

Եղիկ Յարոսլավսկին նախաձեռնությամբ չորս տարի շարունակ Շինուհայրի բանավանում կազմակերպվեց դպրոցականների ամառային ճամբար 150 երեխայի համար։

Եղիկ Յարոսլավսկին, այդ բոլորով հանդերձ, միայն գործարանի տնօրեն չէր։ Նրան հետաքրքիր էին Շինուհայր գյուղի սոցիալ-տնտեսական վիճակը, մարդկային հարաբերություններն առհասարակ։

Շինուհայրի ռեստորան կոչվեղենի գործարանն այդ ժամանակ միութենական նշանակության էր եւ մտնում էր ԽՍՀՄ քիմիական ու նավթաքիմիական արդյունաբերության մինիստրության համակարգի մեջ։ Չեմց այդ նախարարության միջոցով ամեն տարի ձեռք էինք բերում միութենական նշանակության առողջարանների ուղեգրեր եւ հոգում գործարանի աշխատակիցների առողջության ու հանգստի մասին։



ԿԱՌԵՆ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ

Որպես գլխավոր ինժեներ, Եղիկ Յարոսլավսկին հետ աշխատել եմ 1978-1986 թվականներին։ Սկզբից եւեթ ասեմ, որ նրա հետ աշխատելը ստեղծագործական բնույթ ուներ։ Նորի, առաջավորի ջատագով էր։ Նա ուներ իրականության բավականին բարձր մակարդակի գզացողություն։ Իսկ դա հենց այն էր, որի շնորհիվ կարողանում էր կանխատեսել վաղվա օրը եւ միշտ ունենում հստակ կողմնորոշիչներ։

Եղիկ Յարոսլավսկին միշտ գիտակցել է, որ արտադրությունն էլ սրբագրման կարիք ունի։ Եվ մենք միասին արտադրությունում կոչիկ շուրջ 100 նոր մոդել ներդրեցինք։ Դրանք աչքի էին ընկնում իրենց նորածեւությամբ, բացի դրանից, քիչ ծախսատար էին։ Այդ մոդելների շնորհիվ բարձրացավ գործարանի վարկանիշը, նույնիսկ միութենական առաջին կարգի մրցանակների արժանացանք։ Իսկ պատվերներն այնքան շատ էին, որ հազիվ էինք հասցնում։ Խորհրդային Միության ժամանակ «Պլանը» գերակատարումով՝ նշանաբանը, կարծեք, մեզ էր վերաբերում. նախատեսվածից ավելի շատ եւ որակյալ արտադրանք էինք տալիս։

Եվ հիմա, երբ ինչու եմ այդ օրերը, հպարտություն եմ ապրում, չէ՞ որ մենք կարողացանք մի մեծ երկրում մեր ձեռագիրն ունենալ եւ այդ ձեռագիրը շնորհիվ բարձր պահել Չայաստան անունը։

Չեչտ չէր այն ժամանակ մեծ փառքի արժանանալ։ Դա մեզ հաջողվեց հատկապես Եղիկ Յարոսլավսկին շնորհիվ։

Գործարանի պահակից մինչեւ արտադրության պետ ու ինժեներ, հարգում, պաշտում էին նրան։



ՄԻՆԻԿ ՄԻՆԱՅԱՆ

Մեր համատեղ աշխատանքային գործունեությունը սկսվել է 1975թ.։ Ես աշխատում էի Գորիսի ռեստորան կոչվեղենի գործարանում՝ գլխավոր ինժեներ։ Մի օր մտավ իմ աշխատանքային եւ ասաց՝ Միհրան, կուզե՞ս աշխատել ինձ հետ։ Մեծ սիրով՝ պատասխանեցի ես։

Այդ ժամանակ գործարանը գտնվում էր գործարկման պրոցեսում։ Առավոտից մինչեւ ուշ գիշեր Եղիկ Յարոսլավսկին արտադրությունում էր, մանկան պես ուրախանում էր, երբ մի նոր հոսքային գիծ էինք գործարկում կամ մի նոր հաստոց տեղադրում։ Ամենուր ունենալով մեծ հեղինակություն՝ Պատվականիչը կարողանում էր գործարանն արագորեն ապահովել անհրաժեշտ բոլոր նյութերով, սարքավորումներով։

Պատվականիչը միշտ բանվորի կողքին

էր։ Մի անգամ արտադրանքները ստուգելիս պարզվեց, որ պակասորդ կա։ Երեք բանվորի գործ դատարանում էր։ Պատվականիչը դառնալով ինձ ասաց՝ ինչ ուզում ես արա, բանվորները չպետք է վճար կրեն։ Այդպես էլ արեցի։ Դատի արդյունքում գործարանը «պարտվեց»։

Չիչում եմ, գործի ժամանակ էր։ Մեկ էլ լուր ստացանք, որ Յալիձորի արտերը կրակի ճարակ են դարձել։ Շտապեցինք դեպի վայր։ Մինչեւ հրշեջների գալը Պատվականիչն ու ես մեր կոստյումներով, ոտքերով սկսեցինք հրդեհի մարման գործը։

Մի անգամ էլ գյուղի դպրոցի ջերմամատակարարում եւ բնակելի շենքերի էլեկտրիկայի մատակարարումն ընդհատվեց. հրդեհվել էր տրանսֆորմատորը՝ ժանրաբեռնվածության պատճառով։ Ընդ որում՝ նրանք գործարանի հաշվին էին օգտագործում էլեկտրիկա։ Դեպքի մասին զեկուցում եմ նրան՝ վրոզված։

Լսեց ինձ ու ասաց.
– Եթե դուք ձեր տանն առանց լույսի չեք կարող ապրել, ապա այդ մարդիկ՝ նույնպես։ Ինչ ուզում ես արա, նրանք երեկոյան պիտի լույս ունենան։

Ուրախ ինչ, գործարանի պահուստային տրանսֆորմատորը տեղադրեցի, եւ մարդիկ երեկոյան հոսանք ունեցան։

Նաեւ մեծ բարերար էր, շատերին է օգնել... Մի անգամ էլ ինձ օգնեց. մտահոգացում ունեի, սակայն այն, ինչ որոշել էի՝ չիրագործվեց, Լեւոնիչը մնացին բոթի վրա...



ՄԵՅՐԱՆ ԱՐԶՈՒՄՅԱՆ

Շինուհայրի ռեստորան կոչվեղենի գործարանի գլխավոր մեխանիկ 1978-86թթ.

Չայաստանի տարբեր բուհերից եւ շրջաններից մեզ մոտ էին գործուղվում շատ երիտասարդներ եւ փորձ ձեռք բերում։

Երիտասարդ մասնագետներն Եղիկ Յարոսլավսկին ուշադրության կենտրոնում էին։ Ձգտում էր, որ նրանք կայանան ու իրենց տեղը գտնեն ոչ միայն գործարանում, այլեւ կյանքում։ Գրեթե բոլորին ժամանակ առ ժամանակ գործուղում էր միութենական ենթակառուցված գործարաններ՝ Մոսկվա, Լենինգրադ, Ռիգա, Կաունաս՝ փորձ ձեռք բերելու, հմտանալու, կատարելագործվելու նպատակով։

Միջոցներ չէր խնայում նոր եւ առաջավոր տեխնոլոգիաներ ներդնելու համար։ Ձեռք էին բերվում սարքավորումներ Իտալիայից, Գերմանիայից, Չեխոսլովակիայից։

Բայց, այդ ամենով հանդերձ, նրա համար առաջնայինը մարդն էր, գործարանի բանվորն ու մասնագետը։

Աշխատողների բնակարանային պայմանների բարելավումը հայտարարված էր առաջնահերթություն։ Դրա համար էլ ձգտում էր բազմաբնակարան շենքեր կառուցել Գորիսում, ինչի շնորհիվ գործարանի շատ աշխատողներ քաղաքում բնակարան ստացան եւ բարելավեցին իրենց կենցաղային պայմանները։

Եվ այդ ամենը տնօրենն անում էր անշահախնդիր, սրտանց, ինչպես կաներ իր հարազատի համար։

Գուցե ժամանակակիցներն էին ուրիշ, գուցե մենք էինք ջախել եւ նվիրված, բայց, համոզված եմ, Եղիկ Յարոսլավսկին հիմա էլ կաներ նույնը, որովհետեւ մարդ է մեծատառով։



Էդիկ Չարությունյանը
ծնողների հետ

Պարվական Չարությունյան. դիմանկարի ուրվագիծ



ՌԵԴԻԿ ՉԱՐՈՒՆՅԱՆ

Պարվական Իսայի Չարությունյանը մի կարճ ժամանակ է շրջանային բարձր պաշտոն զբաղեցրել. ընդամենը 2-2,5 տարի եղել է Գորիսի շրջանային խորհրդի գործկոմի նախագահ: Բայց նրա անունը մնացել է ինչպես ժամանակակիցների, այնպես էլ հետագա սերունդների հիշողության մեջ:

Որտե՞ղ է գաղտնիքը. այդ պաշտոնը երկու, երեք անգամ եւ ավելի ժամանակ զբաղեցրած անհատներից շատերի անունները նույնիսկ չգիտենք, իսկ նրա անունը հիշվում է...

Այդ ամենի պատասխանը փորձեցինք գտնել Չարությունյանի ազգային արխիվում: Պարվական Չարությունյանի անձնական գործը բավականին սովորածավալ է, ավելի քան 60 էջ: Թղթապանակում կուսակցական, տնտեսական, շրջանային ու հանրապետական մակարդակի ղեկավարների ստորագրությամբ նրան բնութագրող 12 փաստաթուղթ կա: Դրանք իրենց բովանդակությամբ գրեթե նման են իրար, փաստում են, որ Պարվական Չարությունյանը մասնագիտական բարձր որակավորմամբ, մարդկանց հետ անհատական աշխատանքի գիտակ, կազմակերպական ունակություններով օժտված անձնավորություն է: Կա խուճապած մի թերթ եւս, որը խիստ առանձնանում է մյուսներից: Դա Պարվական Չարությունյանի ձեռամբ գրված ինքնակենսագրությունն է:

Աշխատանքի բերումով ձեռագրեր շատ են տեսել, բայց այդքան գեղեցիկ ձեռագիր առաջին անգամ են տեսնում: Ասում են՝ հոգեբանության մեջ կա մի ուղղություն, որը ձեռագրի միջոցով կարողանում է բավականին ճշգրիտ բնութագրել դրա հեղինակին: Դժբախտաբար այդ գիտությանը մենք չենք տիրապետում: Բայց դե աչք ունենք եւ տեսնում ենք, թե կենսագրության հեղինակն ինչ չքնաղ ձեռագիր է ունեցել: Հիշեցի դպրոցական տարիներից մոռացված «վայելչագրություն» բառը: Այդ վայելչագրող գրչով, իր անվանն արժանի մարդը գրում է, որ ծնվել է 1902 թվականին Ջանգեզուր գավառի Շինուհայր գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում: Հայրն ընտանիքի նյութական վիճակը թեթևացնելու համար որդու ծնվելուց առաջ մեկնել էր Բաքու: Այն տարիներին Բաքվի հայկական հոծ համայնքը ձեւավորվում էր Ջանգեզուրից ու Արցախից արտագնա աշխատանքի մեկնածների հաշվին: Այդտեղ նախկին գյուղացիները յուրօրինակ ձեւով միավորվում էին, ստեղծում իրենց համայնքը, հնարավորության սահմաններում իրար օգնության ձեռք մեկնում, զորավիգ լինում միմյանց:

1907 թվականին մանկահասակ Պարվականը տեղափոխվում է Բաքու՝ հոր մոտ: 1910-17թթ. սովորում է Բայիլովի օկրուգային դպրոցում: Ընտանիքի հոգաբարձուհիները համար 1917թ. ընդհատում է ուսումը եւ որպես բանվոր աշխատանքի անցնում Մանթաշովի նավթահանքերում՝ աշխատելով մինչեւ 1920 թվականը: Այդ ընթացքում հասցնում է հաճախել ռուսաց լեզվի եռամյա դասընթացներ, որն ավարտելուց հետո մայրենիին հավասար տիրապետում է նաեւ այդ լեզվին, ինչը հետագայում նրան շատ է օգնում:

1921 թվականին մահանում է հայրը: Ռուսերենին կատարելապես տիրապետելը նրան հնարավորություն է տալիս 1930 թվականին ընդունվել Տաշքենդի բանբանագործության ինստիտուտը, որն ավարտում է 1934 թվականին՝ ստանալով գյուղատնտես-տնտեսագետի որակավորում:

Հանգամանքների բերումով 1934-1940 թվականներին մասնագիտությամբ

աշխատում է Ադրբեջանի բանբանական շրջաններում: 1940 թվականին վերադառնում է հայրենիք եւ աշխատանքի անցնում Երեւանի «Արարատ» տրեստում՝ պլանային բաժնի պետ:

Սկսվում է Մեծ հայրենականը: Հաշվի առնելով մարդկանց հետ աշխատելու փորձը, կրթությունը, ավագ էլետեմանտի կոչումով ծառայության է անցնում 789-րդ հայկական մոտոհրաձգային դիվիզիայում որպես գնդի կոմիսար: Շուտով դիվիզիան մեկնում է ճակատ՝ Հյուսիսային Կովկաս, միանում գործող բանակին: 1942թ. դիվիզիան մարտեր է մղում Կերչ թերակղզու համար: Մեր հայրենակից, արծակազիր Սերո հանգադյանն այդ տարածքը համարում է հայկական գերեզմանոց («Երեք տարի եւ 321օր»): Դեռ այդտեղ էլ Պարվական Չարությունյանը որովայնի շրջանում հրագեցային ծանր վերք է ստանում: Երկարատե բուժումից հետո զորացրվում է եւ վերադառնում տուն: 1942-43թթ. աշխատում է Շինուհայրի «Կոմունա» կոլտնտեսության գյուղատնտես, 1943-47 թվականներին՝ Գորիսի մեքենատրակտորային կայանի ավագ գյուղատնտես, 1947-49 թվականներին ղեկավարում է շրջխորհրդի գործկոմի գյուղատնտեսության բաժինը: 1949թ. ընտրվում է Գորիսի շրջխորհրդի գործկոմի նախագահ:

Հին հունական մի իմաստություն կա՝ ոչ մի բարի գործ անպատիժ չի մնում: Բանից պարզվում է, որ ազնվությունն ու համարձակությունն էլ անպատիժ չեն մնում: 1952թ. ապրիլի 22-23-ը ՀԿԿ Գորիսի շրջկոմի պլենումում քննարկվում էր կենտկոմի բյուրոյում Գորիսի շրջկոմի գործուներության մասին ընդունված որոշումը, որում արձանագրվել էին բազմաթիվ թերություններ ու բացթողումներ: Հարցի կարեւորությունն այնքան մեծ էր, որ շրջան էր եկել ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Չարությունյանը: Պլենումում գեկուցումով հանդես եկավ Երեւանի օկրուգկոմի քարտուղար Անտոն Քոչիմյանը: Ելույթ ունեցավ 17 հոգի, որն ինքնին անմախաղեպ էր: Ելույթներն իրենց թե կառուցվածքով եւ թե բովանդակությամբ քիչ էին տարբերվում իրարից՝ բացառությամբ 2-3 հոգու խոսքի: Քննադատում էին շրջկոմի առաջին

քարտուղարին, բյուրոյի անդամներին: Նույնիսկ նրանք, որոնց ձեռքին, ինչպես ժողովուրդն է ասում, Արմենակ Խաչատրյանը մի կտոր հաց էր դրել, քննադատում էին շրջկոմի 1-ին քարտուղարին: Սակայն նմանների կարծիքը Պարվական Չարությունյանը չէր բաժանում: Նրա համար ճշմարտությունն ու ազնվությունը բացարձակ արժեքներ էին: Եվ նա խոսում է հենց այդ ելակետից՝ գտնելով, որ ճիշտ չէ առկա թերությունների ամբողջ «ծանրությունը մի հոգու վրա բարդելը, նրան քավության նուխադ դարձնելը»: Ավելին, «նա համարձակվում է Գրիգոր Չարությունյանին ասել, որ առկա արտավայրերի պայմաններում նախատեսված անասնազիխաքանակը շատ է եւ հնարավոր չէ պահել» (Ս.Ալեքսանյան, «Այոնյաց երկիր», N5 (381), 2016թ.):

Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Չարությունյանը, ինչպես ընդունված է ասել, Ստալինի «առտա»-ի կարկառուն ներկայացուցիչներից էր եւ չէր կարող ներել սեփական կարծիք ունեցողին ու իրեն հակադրվողին: Շաբաթներ անց Պարվական Չարությունյանն ազատվեց շրջխորհրդի գործկոմի նախագահի պարտականություններից ու նշանակվեց Գորիսի մեքենատրակտորային կայանի գյուղատնտես:

II Միայն ուժեղ ու համարձակ անհատները կարող են նման պայմաններում չկորցնել հոգու արիությունը եւ շարունակել անմնացորդ նվիրումով աշխատել: Ու նա աշխատեց...

Չեռավոր այն տարիներին Պարվական Չարությունյանի որակավորմամբ մասնագետներ նույնիսկ մատների վրա չէին կարող հաշվել: 1953թ. սկզբներին Շինուհայրի ենթաշրջանի կոլտնտեսություններին սպասարկելու համար շրջանում կազմակերպվում է երկրորդ մեքենատրակտորային կայանը: Ինչպես ասում են՝ տաշած քարը գետնին չի մնում: Պարվական Չարությունյանը նշանակվում է նոր կազմավորված մեքենատրակտորային կայանի տնօրեն:

Նոր աշխատանք, այն էլ, ինչպես ասում են՝ դատարկ տեղում, նոր ու բազում հոգսերով: Կար միայն տնօրեն աշխատելու մասին գյուղատնտեսության նախարար Զիլինգարովի ստորագրությամբ երաշխավորագիրը: Նույնիսկ կնիք չուներ, էլ չենք խոսում գրասենյակի, գյուղմեքենաների, աշխատակիցների, պահեստների, մեքենաների կայանատեղերի եւ հազար ու մի հոգսերի մասին: Սկզբնական շրջանում Շինուհայրի ներքին գյուղի նրա հայրական եւ ազգակից բարեկամների տներն էին փոխարինում այդ ամենին: Հայրական տունը եւ գրասենյակ էր, եւ Կարսից ու ճաշարան, իսկ ընտանիքի անդամներն էլ՝ Պարվական Չարությունյանի արտահաստիքային օգնականները: Նոր պաշտոնում նոր որակներով եւ դրսևորվում նրա կազմակերպչական ունակությունները:

Եվ եռանդով ձեռնամուխ է լինում այդ խնդիրների լուծմանը: Կարծես երկրորդ երիտասարդությունն էր ապրում: Հանրապետության կուսակցական, տնտեսական ակտիվը, ղեկավարությունը լավ ծանոթ էին վերելուն հիշատակված պլենումում նրա ունեցած ելույթին, գիտեին, թե ինչպես եւ ինչի համար է մի քանի ամիս առաջ ազատվել շրջխորհրդի գործկոմի նախագահի պաշտոնից: Նրանց ճնշող մեծամասնությունը ներքին համակրանք ուներ Պարվական Չարությունյանի նկատմամբ եւ առիթ էր սպասում այդ համակրանքն արտահայտելու, ցուցարդելու: Եվ ահա այդ առիթը ներկայացել էր: Նրա առջեւ փակ դռներ չկային: Օգնելու համար պատրաստակամ էին համարյա բոլորը: Կարճ ժամանակամիջոցում հրավիրված մասնագետների համար կառուցվեցին երկհարկանի երկու տուն, ճաշարան, ավտոմեքենաների, գյուղատնտեսական տեխնիկայի, գործիքների կայանատեղիներ, արիեստանոցներ, լուծվեցին հարյուրավոր մեծ ու փոքր այլ հարցեր: Պարվական Չարությունյանը

Այստեղ անեն ինչ ամուսնացած է...



Շինուհայր

Պատմական աղբյուրների մեջ հիշատակվում է 10-րդ դարի սկզբից: Ստեփանոս Օրբելյանի մոտ կա գյուղանվան երկու ձև՝ Շնիեթ եւ Շինոյ հեթք: Հետագայում ոմանք գրել են նաեւ Շինու հայր եւ նույնիսկ Հայրաշեն ու այլ ձևերով:

Գտնվում է Գորիս քաղաքից 9 կմ հարավ ընկած սարավանդի վրա՝ ծովի մակերեսույթից 1480 մ բարձրությամբ, եւ զբաղեցնում է 5245 հա տարածք:

2016թ. Տաթևի նորակազմ համայնքի կենտրոնն է՝ մոտ 2500 բնակչությամբ:

Հնուն մտնում էր Մեծ Հայքի Այունիք աշխարհի Հարանդ գավառի մեջ: Ընդ որում՝ Հարանդի ամենախոշոր գյուղն էր: Ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ Տաթևի վանքին վճարում էր 24 միավոր հարկ:

Շնիեթ գյուղը նախապես պատկանել է Այունյաց իշխան Փիլիպեին, ապա նվիրել է Տաթևի վանքին, որը կրկին վերահաստատել է Տարսայի Օրբելյանը՝ 1274 թվականին: Մինչև 19-րդ դարն էլ համարվում էր Տաթևի վանքի սեփականություն:

19-րդ դարի երկրորդ կեսից մտնում էր Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառի, 1929-95 թվականներին՝ Գորիսի շրջանի, 1995 թվականից՝ Այունիքի մարզի մեջ:

Նախկին գյուղը գտնվում էր Որոտան գետի ձախափնյա զառիվեր լանջին:

1961 թվականից Շինուհայրը տեղափոխվեց սարավանդ:

Գյուղի մոտակայքում (հատկապես հին գյուղի տարածքում) ամենուրեք բխում են սառնորակ աղբյուրներ:

Գյուղից ներքե՝ Որոտան գետի նեղ հովտում, տարածվում են մրգատու այգիներ:

Շինուհայրի մոտ կան խալկոպիրիտի հանքեր, գիպս, երկաթի ելքեր:

Բնակիչները զբաղվում են հացահատիկի, կերային կուլտուրաների մշակությամբ, բանջարաբուծությամբ, այգեգործությամբ:

1964-65թթ. Շինուհայր կենտրոնավայրով էր գործում Շինուհայրի, Խոտի, Հարծիսի, Հալիծորի միացյալ պետական տնտեսությունը:

Զանգեզուրի 20-րդ դարի գլխավոր կառուցիչ՝ Տաթևի կից շինարարության կենտրոնավայրն էլ Շինուհայրն էր (այդ կառուցիչ աշխատանքները մեկնարկեցին 1961-ին): Այդ ժամանակ էլ կառուցվեց Շինուհայրի բանավանդը՝ 24 բնակարանից բաղկացած, եռահարկ ութ բնակելի շենքում (հետագայում՝ ես երկու շենք):

1974-2001թթ. գյուղում գործում էր ռետինե կոշիկեղենի գործարանը՝ մոտ հազար աշխատատեղով:

Գյուղում գործում են միջնակարգ դպրոց (Սուրեն Թովմասյանի անվան), հիվանդանոց, մանկապարտեզ...

Հին գյուղի տարածքում են գտնվում Սբ Ստեփանոս եռանավ բազիլիկ եկեղեցին (17-րդ դար) եւ «Խաչքեր» կոչվող գերեզմանատունը, ուր կանգուն է 3 մ բարձրությամբ (լուսանկարում)՝ իր ձեռով եզակի մի կոթող-խաչքար (1261թ.):

Զառիթափ լեռնալանջով շարքերով դարավանդային դասավորությամբ հին գյուղի տներից շատերը ժողովրդական ճարտարապետության արժեքավոր նմուշներ են:

18-րդ դարում Շինուհայրը հիշատակվում է նաեւ իբրեւ ամրոց. 1722թ. Դավիթ Բեկն այդ գյուղում է գումարել (Այունիք հասնելուց հետո) իր առաջին ժողովը:

Առհասարակ գյուղը բազում հերոսամարտերի մասնակից է եղել: 1905թ. գյուղացիներն ապստամբել են ցարական իշխանությունների դեմ, այնուհետեւ կռվել հեղափոխության, քաղաքացիական կռիվների, Հայրենական մեծ պատերազմի ճակատներում, Արցախյան հերոսամարտում:

Հին գյուղի արենայան ծայրին՝ անդրդախոր քարափի գլխին է գտնվում Շնիեթի Սբ Աստվածածինը, որը գիտական գրականության մեջ շրջանառվում է նաեւ այլ անուններով՝ Աստվածածնի վանք, Կուսանաց անապատ, Շնիեթու անապատ, Շինուհայրի կուսանաց անապատ, Շնիեթի վանք...

Մովսես Տաթևացի (Խոտանանցի) է



17-րդ դարասկզբին հիմնել անապատը: Այդ ժամանակներում էլ Շինուհայրը ճանաչվել է իբրեւ գրչության վայր: Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում են Շինուհայրում ստեղծված ձեռագրերը:

Սբ Աստվածածինը կառուցվել է 1676 թվականին (կառուցել է Սուրաթ ճարտարապետն ազուկիսցի Մահուտի Ազարիայի միջոցներով): Անապատը, բացի եկեղեցուց, բաղկացած է գավթից, սեղանատնից, պաշտպանական պարիսպներից եւ զանազան սենյակներից:

1891-ին այդտեղ էր տեղավորված գյուղի ծխական դպրոցը: Իսկ գյուղի առաջին դպրոցի հիմնադրման տարեթիվ է համարվում 1454 թվականը (կառուցվել է Տեր-Ղուկաս հայրենասերի նախաձեռնությամբ):

Շինուհայրում են ծնվել նշանավոր ազգային գործիչ, Զանգեզուրի ազգային խորհրդի անդամ Արշակ Շիրինյանը, Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար (1953-60թթ.) Սուրեն Թովմասյանը, ՀՀ ազգային ակադեմիայի ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսորներ Լենդրոշ Խուրշուդյանը, Հրաչիկ Միմոնյանը, պատմական գիտությունների դոկտոր Խիկար Բարսեղյանը:

ՎԱՐՄ ՕՐԲԵՆՅԱՆ

Պատվական Հարությունյան. դիմանկարի ուրվագիծ

Էջ 7

րությունյանն առանձին հոգածություն ու բժախնդրություն էր ցուցաբերում կադրերի ընտրության հարցում: Բանն այն է, որ մեքենատրակտորային կայանները ստեղծվում էին ոչ միայն կոլեկտիվ տնտեսություններին տեխնիկական օգնություն ցույց տալու համար, այլ նաեւ նրանց մասնագիտական խորհրդատվություն տալու նպատակով: Այդ կադրերը վաղուց չկան, բայց նրանցից շատերի յուրահատուկ գործելակերպի մասին պատմությունները սերնդից սերունդ փոխանցվում ու պարուն են: Դրանցից մեկը կայանի գյուղատնտես Սեւ Սաթր-յի մասին է: Բոլորի նման նա էլ, ինչպես ասում են, իր կին հալով գյուղից գյուղ շրջում էր ծիով: Եթե կոմբայնը հունձ էր անում, ապա նա իջնում էր ծիուց, քայլելով խորանում խոզանի մեջ, երկարաճիտ կոշիկի ճիտքի միջից հանում մտրակը, դրանով մեկ քառակուսի մետր հեծված մակերես սահմանագծում եւ բրիգադավարին ու կոմբայնավարին հրավիրում միասին հավաքելու այդ մակերեսին թափված ցորենի հատիկները՝ այդպես որոշելով հնձի որակը: Վարի խորությունն ու որակն էլ մտրակի կոթով էր որոշում: Մեքենատրակտորային կայանները գործեցին մինչև 1958թ.: Ճակատագրի կամոք այդ թվականին էլ, 56 տարեկանում, այս անցավոր աշխարհին հրաժեշտ տվեց Պատվական Հարությունյանը՝ իր միևնույն որդուն՝ տասնինգամյա Էդիկին որպես ժառանգություն թողնելով մեծ ու հյուրաշատ ընտանիքի հոգսերը:

Ամուսնացած է եղել Շինուհայր գյուղի նշանավոր տոհմերից մեկի՝ Բարուն գերդաստանից սերված Գայանեի հետ: Առաջները՝ Էմման, ծնվում է 1927-ին, հետո ծնվում են Էլան, Ամալյան, Ռիման, Ֆրիդան: 1943թ. հուլիսի 26-ին ծնվում է որդին՝ Էդիկը. նրա ծնունդն ուրախությամբ է լցնում պաճուկապահ Խարազատների սրտերը: Հետո ծնվում է Նորան: Յոթ երեխա... Բոլորն էլ դարձան հայրենիքին նվիրված քաղաքացի:

Ժողովրդական իմաստությունն ասում է՝ պտուղը ծառից հեռու չի ընկնում: Ասել է թե՛ Էդիկ Հարությունյանն իր հորը նման է ոչ միայն արտաքինով, որ ավելի քան ակնհայտ է, այլ նաեւ մյուս առավել կարեւոր հատկություններով՝ աշխատասիրությամբ, կազմակերպչական ունակություններով, մարդկանց հետ աշխատելու աստվածատուր շնորհով, ինտելեկտով եւ յուրահատուկ վերլուծական մտքով: Կա նաեւ վերելում հիշատակված իմաստության հակառակ արտահայտությունը՝ առկա պտուղով են որոշում ծառի տեսակը: Էդիկ Հարությունյանի մարդկային որակների մասին գիտեն նրան ճանաչողները, ինչը թույլ է տալիս հավելյալ պատկերացում կազմել հոր՝ Պատվական Հարությունյանի մասին: Աշխատանքի բերումով ծանոթ են եղել անցած դարի 70-90-ական թվականների Գորիսի տարածաշրջանի հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներին, բայց միայն Էդիկ Հարությունյանին սպասարկող ավտոմեքենայի մեջ են լսել բարձրարժեք, մարդու հոգու հետ խոսող դասական երաժշտություն: Ովքեր մտածում են, թե այս վերջին միտքն անհատին բնութագրող երկրորդական շորիխ է, սխալվում են: Էդիկ Հարությունյանը բարձր ինտելեկտի տեր մտավորական է: Իսկ դա կրթությամբ ձեռք չեն բերում, դա ժառանգում են, այն հորից որդուն է անցնում արյամբ...

Այունյաց երկիր

Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

ՀԻՆՈՒՀԱՅՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ԱՅՈՒՆՅԱՆ ԱՇԽԱՐՀ» ԱՎՅԱՆԱՍԾՈՎ ՊԱՏԱՍԽԱՆՍՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Գորիս
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47: syuniacyerkir@mail.ru www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի): «ԳՈՎԱԶՂ - ԾԱՆՈՒԹՅՈՒՆ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց երկիր» պարտադիր է:

© Շչանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01U 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2: Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպագրանակը՝ 1720, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 29.04.2016թ.: